

## ԴԻՊԼԱԾԱՅԻՆ, ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ Ն. ՇԻՐԱԶԻ ԱՌԱՎՆԵՐՈՒՄ

Նովիաննես Շիրազի գեղարվեստական խոսքը անհնարին է պարկերացնել առանց պարկերավորության և արտահայտչականության: Սրանք մեծ բանասարեղծի մրաժողության ուժն ու շարժիչն են, որ ապահովում են հեղինակային լեզվի ինքնարիպությունը: Մյուս կարևոր կողմը այլաբանությունն է, որն իր լավագույն դրսևորումն ունի նաև նրա առակներում: Կյանքի փորձով թեև առած առակախոսությունը ձևք է բերում փոխանվանական արժեք, որ այլ դեպքում կարող է չունենալ այն նշանակությունը, որ սրանում է փվյալ դեպքում: Թերևս բոլոր ժամանակների համար են գրված «Նավերժական վեճ», «Անբառի առակը», «Արծիվն ու մժեղը», «Օձն ու մեղուն», «Իմաստուն շունը»...: Այդ ամենի մեջ «Մարգարիտն ու փրփուրը» առակը, հավանաբար, Շիրազի առակախոսության գլուխգործոցն է, որը մեծ իմաստ է հանդես բերում և անջնջելի փալավորություն սրելով:

Առակներում Շիրազը ի ցույց է դնում կյանքի բացասական կողմերը, մարդկային հարաբերություններում առկա ինքնամոռաց եսականությունը և փառարենչությունը, մարդուն և մարդկանց ծվարող ազախությունը, նախանձն ու խարդավանքը և այլն: Գրական այս ժանրում դա կարարվում է բոլորովին այլ պերսոնաժների՝ անշունչ առարկաների և այլ կարգի կենդանի էակների «դերակարարության» ձևով:

Բավականին հերաքրքիր է առակի բարոյախրատական կողմը: Ինչպես գիտենք, առակով խոսք ասելը մարդկությանը հայտնի է հնագույն ժամանակներից: Ուստի ամեն մի ժամանակի մեջ սրելով՝ առակն առաջին հերթին իր ժամանակի արտացոլումն է, իր ժամանակի մրաժողության այլաբանական արտապարկերումը այլ՝ «առակի» լեզվով, որն, անշուշտ, կարող է դառնալ մնայուն, այսինքն՝ ոչ թե սոսկ փվյալ ժամանակին է վերաբերում, այլ բոլոր ժամանակներին: Այսպեղից էլ այն, որ առակը մի քանակ վերժամանակային խոսք է, բնորոշ է մարդու մրաժողությանը, նրա այս կամ այն արարքին: Ուստի որքան մնայուն է այդ վարքը կամ արարքը՝ բարի կամ չար, նույնքան քրեական է այն արտացոլող առակը: Ինքնին հերաքրքիր է նաև առակների լեզուն:

Լեզվական քննության համար ընտրել ենք «Առակս գի՜նջ ցուցանե...» ժողովածուն (Երևան, 1976, 64 էջ): Առակների այս հրապարակությունն ունի հետևյալ բնաբանը՝ «Ինչպե՞ս կարող է /Մեռնել առակը,/ Երբ մարդ խայթող է/ Մարդ խայտառակը...»:

Ժողովածուի մեջ գերեզման առակների մի մասն ընթերցողին ծանոթ են փառքեր փարիներին լույս տեսած այլ գրքերից:

1. Այս առակներում լեզվական քննության առարկա կարող են հանդիսանալ ոչ միայն նորակազմ, այլև մյուս կարգի բառերը:

Ամենից առաջ ուշադրություն են գրավում, պայմանականորեն ասած, այն նորակազմ բառերը, որոնք երբեմն բնորոշվում են նաև իբրև դիպվածային բառեր<sup>1</sup>: Տվյալ դեպքում ես հանդիպում եմ դիպվածային կամ սովորական նորակազմ բառեր, որոնք կարելի է ներկայացնել մի քանի խմբով՝ նկատի ունենալով դրանց համեմատությունը բառարանների տվյալների հետ և ըստ այդմ, որոշակի վերապահությամբ, դիտելու իբրև այդպիսին:

ա) Նորակազմ բառեր, որոնք չենք գտնում ժամանակակից հայերենի երեք ընդարձակ բացառական բառարաններից որևէ մեկում<sup>2</sup>:

Օրինակ՝ «Վախ չունես, իրավ, ամենագոռից, Նազար մահից էլ վախ չունես, սակայն, /Դու վախենում ես լոկ այս աթոռից» (էջ 16): «Ինձ ազապիր, թեկուզ ինձ կեր, /Լավ է՝ ես քեզ բաժին դառնամ, /Բան գինեխեղդ դժոխք գնամ» (էջ 26): «Բայց աստղերն ասին, /Լուսագող լուսին, /Գիտենք՝ թո լույսը ումից գողացար, / Որ մեր գլխին էլ թագուհի դարձար» (էջ 54):

Ունենք նաև հետևյալ բառերը. *գահընկեցիկ* «գահընկեց լինել» (էջ 11), *ժեռ-ցավ* «ամուր՝ պինդ ցավ՝ վրանգ» (էջ 17), *կովամերձ* (էջ 36), *հանճարենի* (էջ 41, 42), մերկանուշ «մերկությամբ անուշ՝ հաճելի, գեղեցիկ» (էջ 60), *սաղաթթաձեռ* (էջ 41, 42):

բ) Նորակազմ ենք համարում նաև *գահաթոռ* և *գոյակոհիվ* բառերը:

Առաջինը՝ *գահաթոռ*, չենք գտնում ժամանակակից հայերենի հիշյալ բառարաններից առաջին երկուսում: Իսկ երրորդում նշվում է՝ «նույնն է գահ», ընդ որում նշվում է առանց բնագրային վկայության<sup>3</sup>:

Օրինակ՝ «...ին սիրտն էլ կերան /Գահաթոռները, /Չարի թոռները» (էջ 14):

Երկրորդը՝ *գոյակոհիվ*, ունի միայն Է. Աղայանի բառարանը, ընդ սմին

1 Դիպվածային բառերի մասին համեմատաբար մանրամասն տեսն. **Թ. Ա. Ղարազույան**, Դիպվածային և պոլեմիկալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում. «Լեզվի և ոճի հարցեր», հ. 7, Երևան, 1983, էջ 197-227:

2 **Ս. Մախաճանյան**, Նայերեն բացառական բառարան, հհ. 1-4, Երևան, 1944-1945: «Ժամանակակից հայոց լեզվի բացառական բառարան», հհ. 1-4, Երևան, 1969-1980: **Է. Բ. Աղայան**, Արդի հայերենի բացառական բառարան, Երևան, 1976:

3 Տե՛ս Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 215:

առանց բնագրային վկայության<sup>4</sup>, եւ Շիրագի առակներում այդ բառի գործածությունը ոչ միայն երկրորդաբար ամրակայում է ժամանակակից հայերենում նրա գոյության փաստը:

Օրինակ՝ «Եւ...շոյանքի մեջ սաղարթածեմ/Գոյակոխվն է թվում անմեռն» (Էջ 42):

գ) Նորակազմ բառեր, որոնք չենք գտնում ժամանակակից հայերենի երեք ընդարձակ բացառական բառարաններից մեկում կամ մյուսում: Այսպես, գերեզմանապահ բառը չկա դրանցից միայն առաջինում, իսկ երկրորդում նշվում է ՎԹ (իմա՝ Վահան Թոթովենց) համառոտությամբ եւ բնագրային վկայությամբ<sup>5</sup>, իսկ երրորդում կա, սակայն չի բերվում բնագրային որևէ վկայություն:

Օրինակ՝ «Եւ ամեն գիշեր, երբ լուռ հսկում է գերեզմանապահին, / Լսում է ոսկերց խուլ մի շառաչյուն եւ դժնի բախմունք» (Էջ 52)<sup>6</sup>:

դ) Բառեր, որոնք չենք գտնում հիշյալ բառարաններից միայն առաջինում, իսկ երրորդում այն բերվում է առանց բնագրային վկայության: Այսպես, *թրաքերան* «թրի սայրը՝ սկիզբը. թրի բերան հիշեցնող» բառի դեպքում բառարաններից երկրորդում բերվում է Նովի. Շիրագի առակի նույն այս հարվածը՝ իբրեւ վկայություն, ընդ որում փոքր-ինչ փոփոխված: Նմաբ. «Իրավ ես ասում, ո՛վ թրաքերան, բայց լավ իմանաս, Սոված կմնաս՝ Բանի գորշ մնաս, մնաս գիշարիչ»<sup>7</sup>. «Իրավ ես ասում, ո՛վ թրաքերան, / Բայց լավ իմանաս՝ Սոված կմնաս, / Բանի միս ուրես, մնաս գիշարիչ»: ԷԱԲ-ն ունի, սակայն առանց բնագրային վկայության:

Այդպես նաեւ՝ *մարդահալած* «մարդկանց հալածող՝ հեռացնող, վանող» բառը, որ չունի Մալխասյանցի բառարանը, իսկ Աղայանի բառարանում բերվում է առանց բնագրային վկայության, այնինչ «Ժամանակակից հայոց լեզվի բառարանն» ունի, եւ միակ բնագրային օրինակը քաղված է Նովի. Շիրագի սույն առակից. «Արթուր են մարդիկ քո անունն անգամ, / Եւ մարդահալած մարդուն օձ կանչում»<sup>8</sup>:

ե) Բառեր, որոնք կան բառարաններից միայն մեկում եւ ենթակա են բնագրային գործածության կա՛ն ճշգրտման, կա՛ն լրացման:

*Ինքնամոլ* «ինքն իրենով չափից ավելի հրապուրված» բառը չունի Մալխասյանցը, թեւս քալիս է ինքնամոլություն «ինքն իրեն մոլորեցնելը»: Իսկ Աղայանը բերում է առանց բնագրային վկայության, թեւս նշում է, որ «նույնն է եսամոլ». դրանից բացի ունի նաեւ ինքնամոլություն<sup>9</sup>: Այնինչ, «Ժամանակա-

4 Տե՛ս անդ, էջ 253:

5 «Ժամանակակից հայոց լեզվի բացառական բառարան», հ. 1, Երևան, 1969, էջ 393:

6 Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 52:

7 «Ժամանակակից հայոց լեզվի բացառական բառարան», հ. 2, Երևան, 1972, էջ 393:

8 «Ժամանակակից հայոց լեզվի բացառական բառարան», հ. 3, Երևան, 1974, էջ 491:

9 Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 497:

կից հայոց լեզվի բառարանն» ունի, ընդ որում երկու իմաստով, նախ՝ «եսամով» (օրինակ՝ «Ամեն ոք, բնականաբար սաստիկ եսասեր, ինքնամով էր»։ Վրթ. Փափագյան), այնուհետև՝ «մովի ինքնասիրահար, սաստիկ եսասեր, չափազանց հրապուրված», վերջինիս դեպքում բերվում է Նովի. Շիրազի ոչ այս, այլ բնագրային մեկ ուրիշ օրինակ՝ «Չես հավարա, ո՛վ ինքնամով, դու հիրավի, որ անեղծ անապաստան այն պարանոց դարձար մի նոր բանաստեղծ»<sup>10</sup>։ Իսկ այստեղ ունենք հետևյալ օրինակը. «Զեզ ինքնամով է ասում ու ծաղրում, / Բանգի քո երգն է իր գլխին ճախրում» (էջ 30)։

*Լեռնապար* «սարերի շարքով կուրակում» բառը չենք գտնում Մալխասյանցի բառարանում, իսկ Աղայանի բառարանում այն բերվում է առանց բնագրային վկայության։ «Ժամանակակից հայոց լեզվի բառարանն» ունի, վկայակոչում է Ա. Սահինյանին և Ս. Խանգադյանին, որոնք ժամանակակից են Նովի. Շիրազին, ուստի այն կարելի է դիտել իբրև նույն ժամանակի ընդհանուր գործածության բառ։ Ավելին, այն հանդիպում է ինչպես հիշյալ երկու հեղինակի, նաև ուրիշ գրողների երկերում, նույնիսկ աշխարհագրությանը վերաբերող գրերն բոլոր աշխարհություններում և դասագրքերում։

Օրինակ՝ «Ամեն մի մարդ, թե իր չափով/Գա՛ ինձ օգնի, վկա Աստված, / Երկնք լեռն էլ ափով, / Շով ու սարեր, / Լեռնապարեր» (էջ 21)։

զ) Բառեր, որոնք բառարաններում կա՛ն չկան, կա՛ն բերվում են առանց բնագրային որևէ վկայության։

*Կեղծաժպիտ* «կեղծ ժպիտով. ժպիտը կեղծող», իբրև ածական կամ մակբայ, չկա Մալխասյանցի և Աղայանի բառարաններում, իսկ «Ժամանակակից հայոց լեզվի բառարանում» բերվում է առանց բնագրային վկայության։ Ուստի, Շիրազի առակներում եղած կիրառությունը դառնում է վկայություն այդ բառի գոյության։

Օրինակ՝ «Բազմողին աթոռն ասում է՝ սպի՛ր, / Դամ կեղծաժպիտ հույս փութ մի պարիք» (էջ 12)։

*Նազարագլուխ* բառը չունի Մալխասյանցի բառարանը, Աղայանի բառարանում այն փրվում է առանց բնագրային վկայության, իսկ «Ժամանակակից հայոց լեզվի բառարանում» բերվում և նշվում է՝ «նույնն է Նազարգլուխ», որ բերվում է իր փեղում՝ բնագրային վկայություն առնելով Դերենիկ Դեմիրճյանից։ Այլ կերպ ասած՝ բառարանը չունի հազարագլուխ, ոչ էլ, բնականաբար, բնագրային որևէ վկայություն, այնինչ բառը գործածված ենք գտնում Շիրազի առակներում։

Օրինակ՝ «Չարի, օձի դեմ բարին էլ հառնում/Նազարագլուխ վիշապ է դառնում» (էջ 38)։

<sup>10</sup> «Ժամանակակից հայոց լեզվի բացարձակ բառարան», հ. 2, էջ 330։

*Ճխել* «ճախել» բառը չկա Մալխասյանցի, այլև *Լեզվի* ինստիտուտի բառարանում: Վերջինս ունի, ճխալ «բերկրել, ցնծալ», «թռչունների խմբի ուրախալի ձայն հանելը. առհասարակ ուրախ ձայն արձակելը» իմաստով: Աղայանի բառարանն ունի ճխել, նշում է՝ փն՛ն ճախել «օդի մեջ թռչել՝ սավառնել», սակայն չունի բնագրային վկայություն: Իմաստով այն նույնն է, ինչ Շիրազի գործածածը, որովհետև ճխել-ի կողքին կա ճախել, որն, անշուշտ, կապ ունի բերկրել-ի, ցնծալ-ի հետ: Օրինակ՝ «Ճխում, ճախում էր անվեհեր/Մի բուռ թռչնիկ, մի արարույրիկ» (էջ 19):

2. Բառեր, որոնք գրական կանոնավոր եւ ընդունված լեզվի բայական, գոյականական, ածականական եւ այլ կարգի ձևերի խոսակցական փարբերակներ են, որոնք էլ կարելի է ներկայացնել ըստ այդ փեսակների:

ա) Բայական ձևերն այս դեպքում համեմատաբար շատ են:

Այսպես, *սնել* բայի ոչ գրական՝ խոսակցական մի ձևն է արավ «արեց», որ բավական փարածված է Կարինի եւ Շիրակի վերբարբառային լեզվում, ուստի բնական է, որ այն կարող էր կիրառվել նաեւ Նովի. Շիրազի խոսքում:

Օրինակ՝ «Սեւ ագռավն իսկույն համբավը բերավ /Ականջն ականջ երկրով մեկ արավ» (էջ 56)<sup>11</sup>:

*Ետ դառնալ* հարադիր բայի հրամայականի ձևի գործածություն՝ ե՛ր դառ «հետ դարձիր»:

Օրինակ՝ «Ձագն ամաչեց./Ապշած կանչեց./-Մայր իմ, ե՛ր դառ» (էջ 9):

*Խուժել* «բռնի վրա հասնել, հարձակվել» բայի ըղձականի ձևի գործածություն՝ խուժե «խուժի»:

Օրինակ՝ «Դու քո խղճից էլ չես վախենալու, /Քանզի քնած է հավիւրյան քնով./Առյուծն էլ խուժե քեզ հոշոտելու՝/Դժպտաս, ինչպես անմիտը՝ գինով...» (էջ 16):

*Կարենալ* «կարողանալ, ի վիճակի լինել» բայի դեպքում կա բարբառային կամ խոսակցական կարաս «կարող ես» ձևի գործածություն:

Օրինակ՝ «Չէ՛, թե կարաս՝ փրկի՛ր դու քեզ, /Ձայնեց արջը հագիվ փրկված...» (էջ 9):

«Ավանդ» առակում գործածվել է *հնան ու զնան*, որն անհասկանալի մի կազմություն է, մանավանդ որ կապակցության բաղադրիչները չենք գտնում հիշյալ բառարաններում:

Օրինակ՝ «Այսպեղ են թաղված, այս խեղճ քարի փակ հնան ու զնան», /Եւ

<sup>11</sup> Ինչպես կարելի է նկատել, այդ նույն հարվածում ունենք նաեւ բերավ (փոխանակ՝բերեց) բայաձևի գործածություն:

ամեն գիշեր, երբ լուռ հսկում է գերեզմանապահին՝ /Լսում է ոսկերց խուլ մի շառաչյուն ևս դժնի բախմունք (էջ 52):

*Չուլեյ* բայի ըղձականի մի քարքերական է ձուլել «ձուլի», իսկ պահել բայի նույնպիսի մի ձեռն է պահել «պահի»:

Օրինակ՝ «Լուսինն աստղերին ձուլել իր մեջ, /Որ արեւանա լույ ինքն անշեջ» (էջ 42): «Էլ քուն չի պահել, ու մարդ անբանը /Նավակից դեպի ծովն հրեց շանը» (էջ 22):

Բայական *միք* «մի» մասնիկը ժողովրդախոսակցական ձև է, այսինքն՝ մի արգելականը վերցված է գրաբարյան ք հոգնակի կազմիչի հետ:

Օրինակ՝ «Շաք միք պարծենա, թե վերում եք դեռ» (էջ 28): «Խելքի եկեք, կարճ է կյանքը, միք դավի» (էջ 39):

բ) Անվանական (գոյականական) ձևեր՝ փոքրացուցիչ-փառաբանական երանգով, հնչյունական չնչին փոփոխությամբ՝ *ձայնիկ* (ձայն-իկ), *մրջուն* (փխ. յ-ով՝ մրջյուն. հմմտ. *արուն*, փխ. արյուն, *բուն*, փխ. բույն ևս այլն):

Օրինակ՝ «Բայց երբ սխալմամբ, մի պահ վարանեց./Սոխակն արլորի մի ձայնիկ հանեց./Սեւ ագռավն իսկույն համբավը բերավ /Ականջն ականջ երկրով մեկ արավ» (էջ 56): «Յածրում է, իրավ, բայց բարձր է նորից/Նամեսար մրջունը հպարտ արծվից...» (էջ 5):

գ) Ածականական ձևեր՝ *թափառիկ* «շրջիկ, թափառական», *հեք* (փխ. գ-ով) «հեզ, խոնարհ»:

Օրինակ՝ «Ծնվում Սեւանից կույս ու անառիկ, /Փախչում ես, սեւ ջուր ես դառնում թափառիկ» (էջ 43): «Նանեց իր փուշ-զենքն ու գրահ՝ /Դարձավ մի կունդ /Նեք մագունդ» (էջ 7) և այլն:

դ) Դերանվանական ոչ գրական ընդունված ձևերի փոխարեն խոսակցական լեզվին առավել հարույկ ձևեր՝ *հրա* «իր», քեզպես (բառային մեկ շեշտով) «քեզ նման (մեկը)»:

Օրինակ՝ «Բայց հանկարծ վանքի մի որմի վրա./Տեսավ քանդակված պարկերն ինքն իրա» (էջ 5): «Տեսան՝ պառկել մեջքի վրա/Ճնճողուկը վեր է պարզել/Երկնքի դեմ ուրբերն իրա» (էջ 20): «Եւ շողերն՝ իբրեւ նուրբ ձեռքերն իրա՝ /Երկնքից կախեց մութ ծովի վրա» (էջ 60), «Որի ժպտի քակ քեզպեսն է թաքցում» (էջ 46):

ե) Մակբայի արժեքով խոսակցական լեզվին առավելապես բնորոշ ձևերի կիրառություն՝ էգոց «վաղը»:

Օրինակ՝ «Այսօր ես, *էգուց* դու ես արքան» (էջ 8):

3. Բարբառային բառաձևեր.

Նախ, նշենք, որ Նովի. Շիրազի խոսքում քիչ չեն բարբառային ձևերը: Ծնոր-

հիվ իրենց բնաշխարհի լեզվի կրող մեծանուն բանաստեղծների լեզվամշակման ինքնօրինակ փաղանդի՝ մեր գրական լեզվի մեջ միանգամայն հասկանալի են թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ խմբակցության բարբառներից եկող բառերն ու ոճերը (Մ. Պեշիկթաշյան, Պ. Դուրյան, Մ. Մեծարենց, Ռ. Պապկանյան, Նովի. Թումանյան, Ավ. Իսահակյան...): Նովի. Շիրազը, ինչպես Ավ. Իսահակյանը եւ Ջիվանին, հայերենի այն բարբառի («կը ճյուղի»), փեղական խոսվածքների կրող է, որի պահանջով նա իր գեղարվեստական խոսքում սահմանական ներկա եւ անցյալ անկախորդ ժանանակաձևերը կազմում է այլ կերպ (հմմտ. գրում եմ ~ կը գրեմ, գրում էի ~ կը գրեի եւ այլն): Ըստ այսմ, Շիրազի գեղարվեստական խոսքում գործածվում են նման կազմությամբ ձևեր: Նանդիպում են նաև *կասարվածացնեն* «ասարվածացնում են», *կգովեք* «գովում եք», *կհառաչե* «հառաչում է», *կնեպե* «նեպում է», *կուզե* «ուզում է», *կուրեն* «ուրում են» բարբառային ձևերը:

Օրինակ՝ «Ծածկում են թերին իրենցից բարձրի./ Կասարվածացնեն փառքերով ձրի» (էջ 13. հմմտ. ծածկում են եւ կասարվածացնեն): «Երկրով մեկ ասին, թե չի ամաչում /Սոխակն աթորի նման է կանչում./ Էլ ի՞նչն է սոխակ, էլ ի՞նչ կգովեք» (էջ 57): «Քանզի բո սիրտը առաջվանը չէ, /Նազար ճամփի է ջուրդ պղտորվում.../ Պղծյալի համար ո՞վ կհառաչե...» (էջ 43): «Կամ ուրնահարե, որ անդունդն ընկնի, /Քեզ ցած կնեպե, թե ուրի կանգնի» (էջ 13): «Ամեն ցեղ կուզե ողջը վառվի, /Պառնասում միայն ինքը անրառովի» (էջ 42): «Բայց խորքը նայիր՝ ինչ անգութ են, /Մութ արմարներով իրար կուրեն» (էջ 42):

Մյուս կողմից կան նաև այնպիսի ձևեր, որոնք բարբառային են իրենց վերջավորությամբ, այսինքն՝ գործածվում է ոչ թե գրական -ի, այլ ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ -ն վերջավորություն՝ *ոյրնահարե* - «ոյրնահարիր», *պսհե* - «պսհի» եւ այլն:

Օրինակ՝ «Քեզանից ցածրին վեր բարձրացու, /Քեզանից բարձրին ուշք մի դարձրու, /Կամ ուրնահարե՛, որ անդունդն ընկնի, /Քեզ ցած կնեպե, թե ուրի կանգնի» (էջ 13)<sup>12</sup>: «Էլ տուն չի պսհե, ու մարդ անբանը /Նավակից դեպի ծովն հրեզ շանը» (էջ 22): «Բավ է ցորենի մի երկու հարիկ. /Որ ձեզ ողջ օրը պսհե երջանիկ» (էջ 53):

4. Գրաբարյան բառաձևեր: Մրանք, հավանաբար, խոսքի ընթացքում ինքնաբերաբար կիրառված ձևեր են, որովհետեւ հայերենում դրանք առհասարակ կիրառելի են՝ անկախ խոսքի բանավոր կամ գրավոր լինելու հանգամանքից, ժանրային փառքերությունից, ոճավորման աստիճանից եւ այլն:

Առականերում հանդիպում են նման բառերի հետևյալ կիրառությունները:

<sup>12</sup> Այս օրինակում ունենք նաև կնեպե (փոխանակ՝ կնեպի):

ա) Գոյականի գրաբարյան հոլովական ձևեր՝ արարածոց, հարկավ, մեծաց, ոսկերս, փոքրաց:

*Արարած* բառի գրաբարյան հոգնակի ուղղականն էր արարածք, իսկ սեռականը՝ արարածոց «արարածների»: Առականերում գործածված է խոսքին հանդիսավորություն փայլու նպատակով. խոսքաշարում ունենք արար աշխարհի հին արտահայտությունը, արքա հնաբառը, ուստի դրանց կողքին կիրառելի է գրաբարյան արարածոց ձևը. «Արար աշխարհ է մեր առջև սողում./Ողջ արարածոց արքան ենք, հսկան. /Այսօր ես, էգուց դու ես արքան» (էջ 8):

*Նարկ* «կարիք, պետք, անհրաժեշտ (մի բան)» բառի գրաբարյան եզակի գործիականի ձևն էր հարկավ, որ ժամանակակից հայերենում, իբրև քարացած մի ձև, ունի մակբայի արժեք, գործածվում է իբրև մակբայ՝ «անշուշտ, իրոք, իհարկե» իմաստով<sup>13</sup>. «Վիճում են՝ ո՞վ է հանճարենին, /Նարկավ՝ կաղնին է մարքերի մեջ, /Վարագություն են կաղնուն անվերջ» (էջ 41):

*Ձեռն* «ձեռք» բառի գրաբարյան հոգնակի սեռականի կամ փրականի ձևն էր ձեռաց «ձեռքերի կամ ձեռքերին», որ ժամանակակից հայերենում, դարձյալ իբրև քարացած մի ձև, ունի ածականի արժեք, գործածվում է իբրև ածական «առձեռն, կարճ ժամանակով առած կամ փված» իմաստով, մանավանդ խոսակցական լեզվում<sup>14</sup>:

Օրինակ՝ «Ես եմ ժառանգորդն արևի մեռած: /Ուզեմ՝ բոլորիդ կմարեմ ձեռաց» (էջ 54):

Գործածված ենք գտնում նաև *մեծ* բառի գրաբարյան հոգնակի սեռականի կամ փրականի մեծաց «մեծերի» ձևը. Օրինակ՝ «(Ի սեր իր մի ճոթ, արյունոտ հացի), /...Մտքում ծիծաղում, թե մեծաց վրա,/Թե փոքրաց, - մահ է ծիծաղը նրա (էջ 59): Այս նույն հարվածում կա նաև փոքրաց «փոքրերի» ձևը, որ գրաբարի հոլովման սխալ կազմություն է (փխ. փոքունց «փոքրերի»), որն անշուշտ սրելով՝ ձևով է մեծաց ճիշտ ձևի նմանությամբ՝ անալոգիայով, ավելի շուրջ՝ հարմարեցմամբ, հավանաբար առոգանական ներդաշնակության մղումով:

Գրաբարի *ոսկր* բառի հոգնակի սեռական կամ փրական հոլովի ձևն էր ոսկերց «ոսկորների», որն այսպեղ, թերևս, կիրառված է խոսքի ոճավորման նպատակով:

Օրինակ՝ «Եւ ամեն գիշեր, երբ լուռ հսկում է գերեզմանապահն՝ /Լսում է ոսկերց խուլ մի շառաչյուն եւ դժնի բախմունք» (էջ 52):

բ) Գրաբարից եկող բայի անդեն ձևեր:

Նին հայերենում *սղծիւ* «պղծել, անմաքուր դարձնել» բայի անցյալ դերբա-

13 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացարձակ բառարան», հ. 3, էջ 323:

14 Տե՛ս անդ, էջ 410:



յի ձեւն էր պղծեալ «պղծված, ապականված, փչացրած», որ հեղինակի լեզվում, հավանաբար, գործածված է ռճական մղումով:

Օրինակ՝ «Նազար ճամփի է ջուրդ պղտորվում.../Պղծյալի համար ո՞վ կհառաչե...» (էջ 43)<sup>15</sup>:

գ) *Սև* ածականը գործածված է սեռով ձևով: Սա գրաբարին բնորոշ մի ձեւ է, որը փվյալ խոսքին հաղորդում է դասական երանգ՝ հանդիսավորություն, նաեւ ունի բանաստեղծական փողի փեսավ ձեւին հնչյունական առումով ներդաշնակելու բնույթ:

Օրինակ՝ «Արծիվն՝ հողմի դեմ՝ մի փետուր դարձավ՝/Էլ չդիմացավ պարփության ցավին,/ Ինքն իրեն՝ մի սյավ անդնդում փեսավ» (էջ 11):

Այսպիսով, Նովի. Շիրազի առակների լեզուն ունի ուշագրավ կողմեր՝ բառային նորաբանություն, ժողովրդախոսակցական, մասամբ բարբառային, այլեւ գրաբարից եկող կամ նման ձեւերի համաբանությամբ գործածվող միավորներ, որոնք բանաստեղծի գեղարվեստական խոսքը դարձնում են ինքնատիպ եւ ուշագրավ:

<sup>15</sup> Բայական -յալ ձեւույթը, որ գալիս է գրաբարից, ժամանակակից հայերենում դիպում է որպես բառակազմական մասնիկ. փեն՝ **Ս. Ա. Գալստյան**, Ածանցումը եւ ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978. **Լ. Ս. Նովսեփյան**, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987: